

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասահայ թերթերէ կը հասկցուի թէ Հայկական մեծ յորելաներ ծանօթ ծրագրին համաձայն տօնուած է էջմիածնի մէջ: Վեհ. Կաթողիկոսը Հոկ. 24ի երեկոյն հանդիսաւոր թափօրով իջած է տաճար: Յետոյ բակը լուսավառուած է ելիկտրականութեամբ և պատգամաւորները ժողով գումարած են: 25ին Օշականի մէջ պատարագէ և հոգեհանգրստեան պաշտօն ետե Վեհ. Կաթողիկոսը քարոզած է և ապա եղած են աստեանախօսութիւններ, նախ թրքահայութեան ներկայացուցիչներուն կողմէ: Երեկոյն մեծ խրատածանութիւն եղած է, կիրակի պատարագ և մաղթանք մեծ տաճարին մէջ, յետ միջօրէին՝ հանդէս ձեւարանին մէջ և երեկոյն հացկերոյթ 250 պատգամաւորներու, որոնք յետոյ Վեհ. Կաթողիկոսին ներկայացած են և հորհակալութեան ուղերձէ մը ետք արձակուած են հայրապետական օրհնութեամբ: Բիշէվլի արքեպիսկոպոսը 100,000 բուսլլ յատկացուցած է զպրոցական զբոսադիւնին: Իզմիրի Երիա. Բ. Ընկերակցութիւնը նոյն յորելաներ տօնած է իր ակումբին մէջ Հայ և Աւետ. ազգայիններու հետ: Փրոֆ. Պէշկէօթիւրեան խօսած է յորելաներուն վրայ, միսրնար Մր. Պրիւթըր Մր. Գրոց Հայերէն ընտիր թարգմանութեան վրայ, Տ. Գարբիէլ Հայր ալ կարգացած է երկար ճառ մը: Տարսնի Լուսինեան վարժարանին մէջ նոյն յորելանին առիթով բանախօսած են Ամերիկեան Գոլէճի նախագահ Տր. Բրիւթի, Աւետ. հովիւ Վեր. Ս. Թովմասեան և Գոլէճին դասախօսներէն Հայկարան Տ. Կողտեան և Թրքարան Ս. Բիւրէլեան էֆ.ները: Խարբերդի և Սրվազի հանդէսներուն մասնակցած են Հայ և օտար բոլոր Բրիտանեայ վարժարաններուն աւանդութիւնն ու պաշտօնէութիւնը: Սրվազի թափօրը շարժ Սզգ. վարժարանը և Ամերիկեան դպրոցը այցելելէ ետե ուղղուած է Ս. Նշանի վանքը, ուր եղած է մեծ խրատածանութիւն: Կիրակի Թուրք վարժարանի ուսանողներուն ընկերակցութեամբ այցելուած է Հոգտար թաղը, ուր Մխիթար Աբրահամ ծնած է, և յետոյ դացած է վանքին հարթավայրը, ուր բանախօսութիւններ եղած են կուսակալին նախագահութեամբ: Բարերդի թափօրը պատարագէ և հանդէսէ ետե դացած է Չարխափանի եկեղեցին, ուր հոգեհանգրստ կատարուած է ազգին ոչ միայն զբական աշխատաւորներուն, այլ և 1895ի նահատակներուն համար, որոնց տարեդարձը նոյն օրուան կը դիպէր: Այդ օրը Այնթապի

Ազգային լսարանին մէջ կատարուած է Կրիկեան ձեւարանի պաշտօնապէս բացման հանդէսը, նախագահութեամբ Էնկիւրիի տաջնորդ Տ. Բարգէն Եպսկ.ի, որ այդ առիթով ձեւարանին նուիրած է 500 ոսկիի արժողութեամբ իր զբաղարանը: Յետոյ կարգացուած է 2,332 ոսկինոց ցանկ մը, որուն մէջ կայ Փառէն Վրդ.ի 5,000 Ֆրանքնոց ապահովագրութիւնը, Ս. Նազարեան էֆ.ի 1,000 և Գ. Ղազարեան էֆ.ի 200 ոսկիի նուէրը, ևն.: Ընդ է թէ պահանջուած 10,000 ոսկիին իբր մէկ քառորդը ապահովուած է: ձեւարանը տարի մը տաջ մկսաւ 56 աշակերտով, հիմա ունի 80, որուն 33ը գիշերօթիկ են: Ընթացքը չորս տարի է և կուտայ երկրորդական կրթութիւն, բայց նպատակն է ուսուցիչ և կղեր պատրաստել ազգին համար: Տեսուչն է Այնթապի Գոլէճին ու Հարվրտ Համալսարանի չրջանաւարտ Տիար Աբմենակ Չամիչեան և օդնականը Այնթապի Գոլէճի չրջանաւարտներէն Տիար Յ. Գ. Մխիթրեան: — Ետիւուէի Ազգ. Հիւանդանոցի չրջանակին մէջ կատարուած Սահմանագրութեան վերջին հանդէսին զուտ հասոյթը 26,221 դահ. եղած է: Կայ նաև զեռգանձելի 1,260 դահ. — Ազգ. Ժողովը անցեալ ուրբաթ քուէարկեց երուսողէմի Միտրանութեան նախագիծ կանոնագրին տաջին վեց յօդուածները, բայց չորրորդէն որ արդէն ընդունուած էր: Իսկ Ազգ. տուրքերու գանձման օրինագիծ մը նախաքննութեան յղեց՝ 15 օրէն տեղեկագիր ընդունելու պայմանով: — Բաղաք. Ժողովը խորհրդարանական ընտրութիւններով զբաղող վարչական մասնախմբին լիազօրութիւն տուա խորհրդակցութիւնները վարելու համար ազգին զանազան հատուածներուն հետ: — Խառն Ժողովը որոշեց Թանէսքուի քաղաքին պատրաստութեան պայմանաժամը երկու տարի երկարել և Պասնաճեան էֆ.ի 250 ոսկիի կանխավճար մը ընել՝ նախորդ պայմանագրութիւնը բարեփոխելով: — Ատապաղարի դէպքին առիթով դատապարտուածներու պատիժները թիկեցնելու համար Պ. Հալաճեան, Գ. Զօհրապ և Վարդգէս էֆ.ները առանձին առանձին դիմում բրին վարչապետին և Ներքին դորձերու նախարարին մօտ, յետոյ ևս Տեղապահ Հօր հետ, և լաւ խոստումներ առին: — Զէյթունի հերոսներու պատկերներ ծախող ինը երիտասարդներուն վերջին երկուքն ալ արձակուեցան: Էտիրնէի մնացեալ բանտարկեալներուն համար ալ դիմումներ կը շարունակուին Էտիրնէի մէջ: — Նորընտիր



Պատրիարքը երեքշաբթի Տրապիզոն ժամանեց : Էրզրումի մէջ յայտարարած է թէ այդ քաղաքը բոլոր նահանգներուն մէջ միակն է որ մեծ անդորրութիւն կը վայելէ , Տիրապէքիւրի նահանգը կարծուածին չափ վատթար վիճակ չունի , սակայն Պիթլիսի և Վանի նահանգները խղճալի են և անմիջական ուշադրութեան կարօտ : — Վանայ մէջ տառամարոյժ Միրսաքոյեանի սպանիչն անպարտ արձակուած է , իսկ Հայերու հաւատքն հայհոյող ոստիկան Հասան դեռ պաշտօնի վրայ կը մնայ , պաշտօնագրիման և միամտեայ բանտարկման դատապարտուելուն հակառակ : — Պաշտօնակից մը կը հաշուէ թէ չարայիշատակ Միր Մհէ սպաննած էր 53 զինուոր և վիրաւորած 36 զինուոր , իսկ ժողովրդէն 58 իսլամ և 8 Հայ : — Պըքսթըն եղբայրները որ Հայաստանի մէջ քննական պտոյտ մը բրին , Թայմսի կը գրեն թէ Հայերը մեծ բազմութեամբ կը գաղթեն , թէ սակայն կացութիւնը զգալապէս բարեփոխուած է , կուսակալները ինքնապաշտպանութեան միջոցներ կ'ընծայեն Հայ գիւղացիներուն ընդդէմ Բոթրդերու և թէ կարելի պիտի ըլլայ անկարգութիւններու առջեւն առնել բարենորոգումներու գործադրութեամբ : Ռուս Վարչապետ Մ . Բոքոլցիցի թղթակցի մը յայտարարեց թէ Հայկական բարենորոգումներու ինքիրը դեռ հասունցած չէ , ոչ իսկ ստիպողական է : Ներկայ գերագրգռութեան վայրկեանը յարմար չէ այդ խնդրով զբաղելու համար : Հայաստանի մէջ ոչ նոր անկարգութիւն պատահած է , ոչ ալ ջարդ : Նախկին հանրօգուտ գործերու նախարար Պէսարիա էֆ . կը նկատէ զայս խոստովանութիւն մը թէ կարգ կանոն կը տիրապետէ Արեւելեան նահանգներուն մէջ և թէ բարենորոգումներու հարցը այժմէական չէ : Կը մնայ սակայն հողայինը , որ անլուծելի չէ , թէ և չատ կ'ընտոտ է : Կառավարութեան պարտքն է փութով զայն լուծել ամէն կողմերու համար գոհացուցիչ եղանակով : Իսկ Թերմեւան կ'ըսէ . Ոչ միայն Հայերու , այլև համայն Օսմանցիներու հանդէպ դաւաճանութիւն և ոճիր պիտի ըլլայ այսուհետև հաւատարիմ չմնալ մեր խոստման : Պէտք է ի նկատ առնել Հայոց մտայնութիւնը , որ իրաւամբ կը վարանի վտանգի մեզի և պէտք է ըստ այնմ գործել : Բայց անոնք ալ վտանգելու են այս անգամ : Անգղիոյ Վարչապետն ալ Լոնտոնի Լորտ Բա-

ղաքապետին հացկերոյթին առիթով բանախօսելով , գոհունակութիւն յայտնելէ ետև Ասիական Թուրքիոյ անվթար պահպանման համար , ըսաւ թէ ներքին բարենորոգումներ անհրաժեշտ են և անոնք չեն կրնար գործադրուիլ առանց տէրութիւններու օժանդակութեան : Առ այդ պատրաստ է Անգղիա , առանց սակայն մոռնալու միւս տէրութիւններու շահերը :

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Մ . Թաքէ Եոնէսքու և տիկինը իշխանավայել ընդունելութիւն մը դտան Յուսաստանի մէջ : Երբ Պիրէոն ժամանեցին , 300 նաւեր գրօշազարդուեցան և բարի գալստեան երգեր բարձրացան օդին մէջ : Քաղաքապետը ծաղկեփունջ մը նուիրեց Տիկին Եոնէսքուի և բոլոր զանգակները զարնուեցան : Նոյն պատիւները կրկնուեցան Աթէնքի մէջ , ուր շարաթ գոհարանական աղօթքի մը ներկայ եղան Ալլանիկի առման տարեդարձին առիթով , յետոյ տեսակցեցան Թագաւորին , Վարչապետին և նախարարներու հետ : — Կ'իմացուի թէ երեքշաբթի Աթէնքի մէջ ստորագրուած է Թուրքուոյն համաձայնութեան նախապայմանագիր մը որու համար աշխատեցաւ Մ . Եոնէսքու և յետաձգեց իր մեկնումը , մինչև չորեքշաբթի : — Պուլկարիոյ Արտաքին նախարար Մ . Կէննատիէվ երկուշաբթի ընտրական պայքարը բացաւ գանգատելով որ Չաթալձայի մէջ հաշտութիւն չկնքուեցաւ և յետոյ Լոնտոնի բանակցութիւնները խզելով դաշնակիցներու թշնամութիւններուն առիթ տրուեցաւ : — Անցեալ շաբթու Լուի Գ . Պալլէրայի գահը բարձրացաւ : — Քիէվի մէջ մեծազորոգ դատ մը վերջացաւ երկուշաբթի : Հրեայ Պայլիս , որ ամբաստանուած էր իբրև սպանիչ Եուլթինցքի անուն 12 տարեկան պատանիի մը , որուն վրայ 45 վէրք կար , անպարտ արձակուեցաւ : Դատավարութիւնը ամիս մը տեւեց գիշեր ցեւրիկ շարունակուելով :

ՏՊԱՐԱՆ ԲԷՆԵՔՍԱՆ  
Մահմուտ Փաշա , Բիւրքէի խան , 1880 . 32-34